

մինչև ցայսօր ժամանակի ի միում տեղով կայ ոչ էառ, այլ զինչ տեղիս որ զնաց զամենեսան զայթակղեցոյց, երբեմն զնաց ի յերկիրն Փրանակաց, թէ որքան զայթակղութեան) պատճառ եղև այլեւայլ կերպիւ բարբաջմունք առնելով զ(ա)ս(ն) տառապեալ ազգիս մերում: Իսկ անդուստ յորժամ եկն այս կողմունքս, եւ զինչ տեղիս որ չընդաւայեցաւ, այլեւս յաղագս իւր փորաւերութեան եւ այլանդակ շարժմանցն, բովանդակ զայթակղեցոյց, ո(ր)պ(էս) իւր բնիկ քաղաքն Արզրում: Իսկ այժմս եկեալ է այդ ա(ւր)հնեալ քաղաքդ, զոմանս իւրն համախոհ առնելով այդր եւս ելից զայթակղութեամբ: Զի յառաջ քան զայս բանադրեցի զինք, որ կորչէր այդուստ եւ զնայր այլ ուրէք, զի թերեւս պարզամիտ ժողովուրդն ազատեալ էին յիւրմէն: Իսկ այդ անիծեալդ ի հոգւոյն սրբոյ, յամառելով չզնաց մինչև ցայսօր:»

«Սիրելի որդիք թէ Փրանկ է, թող զնայ ի մէջ Փրանկաց կենայ: Իսկ թէ հայ է, ապա զինչք է դ(ո)ր(ա) այլանդակ շարժմունքն, ողորմելի Փրանկաց պատրիկն իւրեանց վարուցն եւ կրօնից կենան, եւ ոչ զոք զայթակղեցուցանեն, եւ ոչ յազգիս մերում նախատինս առնեն: Իսկ այդ անիծեալդ ուրացութիւն) առնելով, միշտ եւ հանապազ արհամարէ զազգս եւ զկրօնս մեր, հոգեւոր որդիք թէ դա լաւ մարդ էր, թող իւր քաղաքն կենայր, թէ փոքր մի այլ մնացեալ էր Արզրում կու կախէին զինքն: Յաղագս այսքան պատճառանացս, այժմս կրկին անդամ բանադրեցի այդ ա(ստուծո)յ առեղի չխաբսեղդ, եւ արկի ի ներքոյ առնիծից եւ բանադրանաց: Իսկ այսուհետեւ թէ զիմ ա(ւր)հնութիւն)ս կու սիրէք ի հասանել թղթոյս առ ձեզ, զինչ հնարիւք որ է, այդ ա(ւր)հնեալ քաղաքէդ հալածել կուտայք այդ ամենապիղծըդ, այլ չթողուք որ այդր կենայ, եւ ով ոք որ այդ նդովեալդ ի հոգոյն սրբոյ, թողու իւր տանն եւ օտան (սենեակ) նստելով կամ զնելով հետ իւրն, եւ կամ բարեւ տայ եւ կամ բարեւ առնու, այնպիսիքն եւս եղիցին կցորդք բանադրանաց ն(ո)ր(ա): Իսկ կատարողք

հրամանաց մերոց ա(ւր)հնեցին յա(ստուծո)յ եւ ամ(ենայն) սրբոց ն(ո)ր(ա) եւ ի մէնջ. ամէն: Գրեցաւ ՌՃԻԹ (1680) թուին Մարտի ամսոյ ի ԻԴ (24), ի մայրաքաղաքս ըստամպաւ:» (Արտագրուած Հաւատոյ Տարածման Ժողովին դիւանէն Congr. Armeno. V. III. F. 241:)

Աւելորդ է հոս դիտողութիւն եւ լուսարանութիւն ընել: Յակոբ Զուղայեցի անկերբայելի կերպով ցոյց կուտայ որ հաւատոյ ուրացում է հայու մը համար Փրանկանալ, այսինքն հոռմէադաւան ըլլալ: Ծիծաղելի է այսպէս արտայայտուող մէկը հայածէսութիւնէ Հոռմէադաւանութեան դարձած նկատել, ինչպէս որ քմահաճ կերպով եւ պարզապէս չաղակրատութեամբ կատարուած է ոմանց կողմէ: Յերիւրանքով կարելի չէ պատմութիւն դրել: Իսկ եթէ ըսուածները տղիտութեան արդիւնք նկատենք տղիտութիւնը դործ չունի պատմագրութեան մէջ:

Վերի նամակին դրուած օրն իսկ երկրորդ նամակ մը դրած է Յակոբ Զուղայեցի նոյն Բարսեղ հաւատադարձ վարդապետին մասին, որ հոս անմիջապէս կուտամ առնելով նոյն դիւանէն:

Նամակին վերը Յակոբ Զուղայեցիի կաթողիկոսական կնիքը:

«Յի(սուսի) Ք(րիստոսի) ծառայ Յակոբ Կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)ս ամ(ենայն) Հայոց: Եւ Պատրիարք Վաղարշապատու լուսակառ եւ ք(րիստոս)անկար սրբոյ աթոռոյ էջմիածնի:»

«Յորմէ ժամանեալ հասցէ դիր ա(ւր)հնութեան), եւ նամակ պահպանութեան), շնորհք առաքելական եւ աստուածային բաղմապատիկ ա(ւր)հնութիւն ի վ(ե)ր(ա) հոգեւոր որդւոցդ իմոյ Ղազարիդ, եւ Թահմազիդ, եւ Ք(րիստոս)իւ զօրացեալ զարմից եւ դաւակաց ձերոց, եւ առ հասարակ ամ(ենայն) ընտանեաց ձերոց ի ա(է)ր յոյժ խնդալ:»

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն) յա(ստուծո)յ հօրէ, եւ ի տ(եառն) է մերմէ յ(իսուս)է ք(րիստոս)է, եւ ի սրբոյ հոգւոյն կենաբարէ, եւ առա-